Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ Հայաստան
United Nations Population Fund Armenia

Համընդհանուր ուսումնասիրություն. ԲԶՄՀ 2014 թ.-ից ի վեր

Ամփոփիչ վերլուծական

Նախաբան .....

2012 թ. սեպտեմբերի 2-ից նոյեմբերի 2-ը Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ և ՀՀ կառավարության հետ սերտ համագործակցությամբ իրականացրել է «Բնակչության և զարգացման միջազգային համաժողովը 2014 թվականից անդին» ուսումնասիրության հարցաշարը լրացնելու աշխատանքները, որի շրջանակներում խորհրդակցական հանդիպումներ և ֆոկուս խմբեր են անցկացվել լիազոր պետական մարմինների, քաղաքացիական հասարակության կառույցների, մասնավոր ընկերությունների հետ, ինչպես նաև կատարվել է փաստաթղթերի ուսումնասիրություն:

Հարցաշարը լրացվել է Հայաստանի Հանրապետությունում Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի (ICPD) գործողությունների ծրագրի իրականացման ընթացքը գնահատելու նպատակով՝ հղում կատարելով Միավորված Ազգերի Գլխավոր ասամբլեայի 2010 թ. դեկտեմբերի 10-ի թիվ 54/234 բանաձևին, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կողմից հաստատված աշխատանքի առաջադրանքի շրջանակներում: Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի գործողությունների ծրագրի ազգային և տարածաշրջանային զեկույցները հիմք են ծառայելու Բնակչության և զարգացման հանձնաժողովի համար՝ 47-րդ նստաշրջանում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի համաշխարհային զեկույցը նախապատրաստելու համար:

Հարցաշարի պատասխանները մշակելու նպատակով խորհրդակցական հանդիպումներ են տեղի ունեցել հետևյալ կառույցների աշխատակիցների հետ՝

- Պետական կառավարման մարմիններ
  - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
  - ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
  - ՀՀ կրթության և գիտության նախարարություն
  - ՀՀ առողջապահության նախարարություն
  - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
  - ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

- ՀՀ քաղաքաշինության նախարարություն
- ՀՀ Ոստիկանություն
- ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն
- ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն

- Միջազգային կազմակերպություններ

  - Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան ներկայացուցչություն
  - ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ
  - ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ

- Հասարակական կազմակերպություններ և մասնավոր ընկերություններ

  - Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
  - «Առաքելություն Հայաստան» ՀԿ
  - «Փրկենք երեխաներին» Հայաստան
  - Կանանց իրավունքների կենտրոն
  - «Վիվասել-ՄՏՍ» բջջային կապի օպերատոր
  - «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ
  - «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական կլոր սեղան» բարեգործական հիմնադրամ
  - «Մարդը կարիքի մեջ» ՀԿ
  - Հայկական Կարմիր խաչի ընկերություն
  - Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ
  - «Հանուն ընտանիքի և առողջության» համահայկական ասոցիացիա
  - Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհուրդ
  - ՀՀ հանրային խորհուրդ
  - Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ
  - «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ
  - Սոցիալ-ժողովրդագրական նախաձեռնությունների կենտրոն

Ընդհանուր թվով, հանդիպումներ են կազմակերպվել 50 աշխատակիցների հետ: Հարցաշարի լրացման աշխատանքների ընթացքում որոշ հարցերի պատասխաններ հստակեցնելու կամ պարզաբանելու նպատակով կանոնավոր կապ է հաստատվել բոլոր հարցվողների հետ:

Ի լրումն, կատարվել է համապատասխան ոլորտների կանոնակարգման և հայեցակարգային փաստաթղթերի ուսումնասիրություն՝ հիմնվելով Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի՝ www.arlis.am և վերոհիշյալ պետական գերատեսչությունների կայքերում առկա փաստաթղթերի՝ կառավարության որոշումների, հաշվետվությունների և այլ ծրագրային փաստաթղթերի վրա:

Քանի որ ուսումնասիրությունը համընդհանուր է, մեթոդաբանությունը ևս ընդհանրական է, ինչը ենթադրում է, որ առանձին երկրների առանձնահատկություններն այդ մեթոդաբանության մեջ դիտարկված չեն: Բնականաբար, նման ուսումնասիրությունների հիմնական խնդիրներից մեկը համեմատության առանցքների ստեղծումն է, սակայն, միևնույն ժամանակ, առաջանում են մեթոդաբանական բարդություններ: Մասնավորապես, այս ուսումնասիրության մեթոդաբանության հիմնական սահմանափակումներից մեկը երկրի առանձնահատկությունների վերաբերյալ պարզաբանումների անհնարինությունն էր: Օրինակ՝ բաժին 8-ում ներառված բազմաթիվ կրթական խնդիրներում հատուկ

շեշտադրված է աղջիկների թիրախային խումբը, մինչդեռ թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային տարիներին տղա/աղջիկ համամասնությունը Հայաստանի կրթական համակարգում պահպանվել և պահպանվում է: Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի (ԲԶՄՀ) արծարծած նման մեկ այլ խնդիր երկրի բնակչության գրաճանաչությունն է: Ըստ ՀՀ պաշտոնական վիճակագրության՝ Հայաստանի բնակչության 99 տոկոսը[1] գրաճանաչ է, այդ իսկ պատճառով գրաճանաչությունը չի սահմանվում որպես պետական քաղաքականության առանցքային խնդիր: Մինչդեռ հարցաշարի մեթոդաբանությունը հնարավորություն չի ընձեռում համապատասխան բաժնում կամ հարցաշարի մեկ այլ մասում նման նշում անել:

Մի շարք այլ խնդիրներ, որոնք սահմանվում են ԲԶՄՀ ոլորտային քաղաքականության մեջ, որպես այդպիսին, գոյություն չունեն Հայաստանում, կամ անգամ եթե նման խնդիր գոյություն ունի երկրում, այն որպես այդպիսին չի ընկալվում կամ, ավելի ճիշտ, առայժմ երկրի ոլորտային քաղաքականության մեջ չի սահմանվում որպես խնդիր: Օրինակ՝ նման գոյություն չունեցող խնդիրներից է կանանց սեռական օրգանների խեղում/հատումը:

Երկրորդ խմբի խնդիրներից է դեռահաս աղջիկների հղիության խնդիրը: Հայաստանում նման աղջիկները, հատկապես եթե նրանք խոցելի խմբերից են, միանգամայն դուրս են մնում կրթական, առողջապահական և այլ հանրային ծառայությունների համակարգից: Միջին և բարձր խավի ընտանիքներում նման խնդիր անգամ չի առաջանում, որովհետև հղիության դեպքերը դուրս չեն գալիս ընտանիքի շրջանակներից: Անչափահաս աղջկա հղիությունը դիտարկվում է որպես ընդունված բարոյական նորմերի խիստ ոտնահարում: Խոցելի ընտանիքները չեն կարողանում որևէ օժանդակություն ապահովել նման դեռահասների համար, իսկ պետական կամ հասարակական աջակցության մեխանիզմներ ընդհանրապես գոյություն չունեն:

Հղի աղջիկներին աջակցություն անհրաժեշտ է հատկապես դպրոցն ավարտելու հարցում: Հարցվողների կարծիքով՝ խոցելի ընտանիքների աղջիկները նման դեպքերում հետագա կրթության հնարավորություններից միանգամայն դուրս են մնում, և, թեև գոյություն ունեն երեկոյան և հեռակա դպրոցներ, հանրային խարանն այս աղջիկներին թույլ չի տալիս շարունակելու կրթությունը: Ըստ հարցվողների՝ սա էական խնդիր է, որը պետք է բարձրաձայնել: Սակայն նման կարևոր դիրքորոշումը ուսումնասիրության տվյալներում ընդգրկված չէ, քանի որ հարցաշարի մեթոդաբանությունը թույլ չի տալիս նման պարզաբանումներ և տեսակետներ ներառել:

Վերլուծության ընդհանուր շրջանակը……

Լրացված հարցաշարը հարուստ հետազոտական տվյալների բազա է, որը հիմք ընդունելով, կարելի է բազմաթիվ տեսանկյուններից (օրինակ՝ իրավական, քաղաքական և սոցիոլոգիական) վերլուծել Հայաստանի ներկա ժողովրդագրական իրավիճակի և հիմնախնդիրների բույլը: Ներկա վերլուծականի հիմքում ոլորտային քաղաքականությունն է և հետևյալ առանցքային հարցերը.

1) Ինչպե՞ս են կանոնակարգվում բնակչության զարգացման հիմնախնդիրները Հայաստանում:
2) Որո՞նք են կանոնակարգման բացերը:
3) Ի՞նչ գործոններ են նպաստել/խոչընդոտել բնակչության զարգացման հիմնախնդիրների լուծման գործընթացին:
4) Ի՞նչ հարցադրումներ և խնդիրներ արտացոլվեցին ուսումնասիրության ընթացքում:

[1] http://www.unicef.org/infobycountry/armenia_statistics.html#98

Սույն վերլուծականում մենք չենք հավակնում իրականացնել ԲՋՄՀ խնդիրների համապարփակ վերլուծություն, այլ ընդամենը վեր հանել այն ընդհանուր ձեռքբերումներն ու մտահոգությունները, որոնք կարող են ուղենիշ հանդիսանալ թե՛ որոշում կայացնողների, թե՛ հետազոտողների համար՝ առավել մանրամասն ուսումնասիրելու բնակչության զարգացման խնդիրները կամ գտնելու ոլորտային քաղաքականության համապատասխան վեկտորը:

Բնակչության զարգացման հիմնախնդիրների կանոնակարգում .....

Այս ուսումնասիրության առանցքում հետևյալ ԲՋՄՀ ոլորտներն են՝ բնակչություն և կայուն զարգացում, բնակչության աճ և կառուցվածք, որտեղ ներառված են դեռահասների և երիտասարդների (10-24 տարեկան), տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները, ուրբանիզացիա և ներքին միգրացիա, միջազգային միգրացիա, ընտանիքի և անհատի բարօրություն, վերարտադրողական իրավունքներ և առողջություն, գենդերային հավասարություն և կանանց զորացում, և կրթություն:

Ուսումնասիրության արդյունքում պարզորեն ուրվագծվում է, որ գրեթե բոլոր ոլորտները Հայաստանում կանոնակարգված են, քանի որ առկա է համապատասխան օրենսդրություն և հայեցակարգային կամ ռազմավարական փաստաթղթեր, ինչպիսիք են պետական հայեցակարգերը և ծրագրերի ու տարեկան միջոցառումների կամ գործողությունների ցանկերը: Այս առումով, թերևս, միակ ԲՋՄՀ ոլորտը, որտեղ կանոնակարգային փաստաթղթեր առայժմ մշակված չեն, ներքին միգրացիան է: Նեղ ոլորտային առումով, թերկարգավորված են կամ ընդհանրապես կանոնակարգված չեն մի շարք հիմնախնդիրներ.

- *առողջապահության ոլորտում՝* դեղորայքային աբորտի և տարեցների սեռական առողջության խնդիրները.
- *ընտանիքների բարօրության ոլորտում՝* հաշմանդամություն կամ առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց խնամող ընտանիքների աջակցության խնդիրները.
- *բնակչության կառուցվածքի առումով՝* տարեցների հմտությունների և կարողությունների լիարժեք օգտագործման և նրանց համար աշխատելու հնարավորությունների ստեղծման, նրանց անտեսման և նրանց նկատմամբ դաժան վերաբերմունքի ու բռնության խնդիրները.
- *ուրբանիզացիայի և ներքին միգրացիայի ոլորտում՝* ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) համար առողջապահական, կրթական, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման աջակցության խթանման, քաղաքային բնակչության աճի նախաձեռնողական պլանավորման խնդիրները.
- *միջազգային միգրացիայի ոլորտում՝* գենդերային և տարիքային խնդիրների հաշվառման, դրամական փոխանցումների հոսքի և օգտագործման դյուրացման խնդիրները.
- *կրթության ոլորտում՝* դպրոց չհաճախող երեխաների ու դեռահասների՝ հատկապես աղջիկների համար վերապատրաստման և զբաղվածության հնարավորությունների ստեղծման, ինչպես նաև սեռական և վերարտադրողական առողջության (ՍՎԱ) վերաբերյալ տեղեկությունների և ծառայությունների հասանելիության, ուսուցիչների վերապատրաստման ծրագրերում բնակչության և ՍՎԱ վերաբերյալ տեղեկությունների ընդգրկման, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության մեջ կյանքի պլանավորման հմտությունների ընդգրկման խնդիրները:

Այդուհանդերձ, թեև հայեցակարգային կամ օրենսդրական ուղղակի անդրադարձն այս խնդիրներին բացակայում է, իրականում որոշ խնդիրներին լուծումներ տրվում են գործնական դաշտում: Օրինակ՝ դպրոց չհաճախող դեռահասների համար ՍՎԱ ծառայություններ հասանելի են 2005 թվականից մինչ օրս՝ Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի կողմից իրականացվող «Դեռահասների առողջության բարելավում» ծրագրի շրջանակներում: Կյանքի պլանավորման հմտությունները թեև համապարփակ կերպով ներառված չեն կրթության տարբեր ձևաչափերում, այդուհանդերձ առնվազն ֆորմալ կրթության մեջ դրա որոշ տարրեր ներառված են դասավանդվող հիմնական առարկայացանկում, մասնավորապես «Առողջ ապրելակերպ» դասընթացում: Որոշ հանրակրթական դպրոցներ սկսել են դասավանդել նաև «Մասնագիտական կողմնորոշում» ընտրովի առարկան, որին նպաստել է «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը (http://www.mycareer.am): Վերջինս բավականին ակտիվ է նաև ոչ ֆորմալ կրթության մեջ:

Միջազգային միգրացիայի ոլորտում դրամական փոխանցումների հոսքի և օգտագործման դյուրացման խնդիրները հայտնվել են որոշում կայացնողների ուշադրության կենտրոնում, մասնավորապես Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄԶՄԿ) կողմից Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համագործակցությամբ և Եվրոպական հանձնաժողովի օժանդակությամբ իրականացվող «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի շրջանակներում: Արդեն իսկ կազմակերպվել են փորձագիտական քննարկումներ և մշակվել են քաղաքականության վերաբերյալ վերլուծականներ, օրինակ՝ «Աշխատանքային միգրանտների ֆինանսական խնդիրների լուծման այլընտրանքային ուղիները» խորագրով համառոտագիրը, որը գործնական մեխանիզմներ է առաջարկում այս խնդիրը կանոնակարգելու համար:

Բնակչության կառուցվածքի առումով ակտիվ քայլեր են նախագծվում և իրականացվում տարեցներին վերաբերող քաղաքականության իրականացման ուղղությամբ, քանի որ Հայաստանի բնակչությունն այլևս դիտարկվում է որպես ծերացող[2]: Ակտիվ պետական միջամտություն է իրականացվում ծնելիության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ մասնավորապես երեխայի ծննդյան և խնամքի նպաստների, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի, երեխայի ծննդյան միանվագ նպաստի մեխանիզմների կիրառմամբ, նախադպրոցական կրթության ծառայությունների որակի բարելավման և բնակարանաշինության խթանման միջոցով[3]: Վերոհիշյալ այլ նեղ ոլորտային խնդիրներ արդեն իսկ գիտակցվում են որպես հրատապ, սակայն դրանք լուծելու ուղղությամբ իրականացվող կանոնակարգային և գործնական միջոցառումներն առայժմ բացակայում են:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ բացառությամբ ներքին միգրացիայի ոլորտի, բոլոր այլ ոլորտներում առկա են միջազգային նորմերին համապատասխանող կանոնակարգային փաստաթղթեր և օրենսդրական ակտեր: Սակայն ուսումնասիրության արդյունքում բազմաթիվ անգամներ հնչեցին կարծիքներ, որ չնայած ամուր կանոնակարգային հիմքին, իրականացման մեխանիզմները դեռևս թերի են և ունեն բարելավման կարիք: Իրավիճակը կարելի է ամփոփել հարցման մասնակիցներից մեկի դիտարկմամբ. «Մեր օրենքները լավն են, մնում է կիրառել»:

Մեկ այլ խնդիր, որը սերտորեն առնչվում է նախորդի հետ և հրատապ է այս մակարդակում, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների ամրագրումն է օրենսդրորեն: Գրեթե բոլոր ոլորտներում մշտադիտարկման և գնահատման պրակտիկան թերի որակվեց: Թեև պետական գերատեսչությունները պարտավոր են ներկայացնել իրենց գործունեության վերաբերյալ ամենամյա հաշվետվություններ, անգամ այդ հաշվետվությունների ձևաչափում անհրաժեշտ է համապատասխան փոփո-

[2] Ministry of Labour and Social Issues of RA, National Institute of Labor and Social Research and National Statistical Service of RA (2009) Ageing Survey in Armenia. Yerevan.
3 Խուրշուդյան, Ա. և Ամիրջանյան, Պ. (2011) ՀՀ Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և ՀՀ 2011թ. Տարեկան բյուջեի օրենքի նախագծի համապատասխանության վերաբերյալ վերլուծական հաշվետվություն. Երևան:

խություններ կատարել, որոնք կարտացոլեն նրանց գործունեության գնահատման պրակտիկան հնարավորինս համապարփակ կերպով: Օրինակ՝ հաշվետվություններում կարիք կա ամրագրելու նաև նախատեսված միջոցառումների թերկատարման վերաբերյալ տվյալները, ինչպես նաև ներառել հետագա բարելավման ուղիները:

Բնակչության զարգացման հիմնախնդիրների լուծման գործընթացին նպաստող/խոչընդոտող գործոններ

Ուսումնասիրության առանցքային հարցերից մեկը բնակչության զարգացման հիմնախնդիրների լուծման գործընթացին նպաստող և խոչընդոտող գործոնները վերհանելն էր: Նպաստավոր գործոններից թերևս ամենահաճախ նշվողը տարբեր շահագրգիռ կողմերի համագործակցությունն էր, որի առաջ բերած շարժիչ ուժը դրդում էր կառավարությանը լրջորեն քննարկել և մշակել խնդրին հարիր լուծումներ՝ արդեն պետական մակարդակով: Նման խնդիրներից են, օրինակ՝ երեխաների պաշտպանության և թրաֆիքինգի խնդիրները:

Հատկանշական է, որ ակնհայտորեն ավելացել է նաև մասնավոր հատվածի ներգրավվածությունը խնդիրներին արձագանքելու գործում: Եթե ընդամենը հինգ տարի առաջ որոշակի խնդիրների առնչությամբ ձեռքբերումները հիմնականում վերագրվում էին միջազգային կառույցների հետ համագործակցությանը, ապա այսօր ակնհայտորեն աճել է նաև գործատուների ներգրավման մակարդակը, հատկապես կրթության և ՏՀՏ ոլորտներում:

Մասնավոր հատվածի ներգրավումն իրապես խրախուսելի է, սակայն հարցման ընթացքում պարզորոշ ուրվագծվեց մի խնդիր՝ ինչպե՞ս են գործատուները ներգրավվում այս կամ այն խնդրի լուծման գործընթացին: Բազմաթիվ են դեպքերը, երբ նրանց ներգրավվածությունն իրականացվում է անուղղակիորեն, մասնավորապես բարեգործական հիմնադրամների միջոցով: Նման մոտեցումը հատկապես ակնհայտ էր տարեցներին վերաբերող քաղաքականության ոլորտում: Բարեգործական հիմնադրամներն, ըստ սահմանման, քաղաքացիական հասարակության կառույցներ (ՔՀԿ) են, սակայն շահառուների ընկալումն իրականում այլ է. նախագծերը սովորաբար վերագրվում են այն գործատուին, ով տվյալ հիմնադրամի հիմնական նվիրատուն է: Այստեղ առաջ է գալիս բարեգործության վերասահմանման և օրենսդրական սահմանումների հստակեցման կարիք:

Երկրորդ կարևորագույն գործոնը համարվում է պետական ֆինանսավորումը՝ անկախ այդ ֆինանսավորման չափից: Ֆինանսական միջոցների սղության պայմաններում նման մոտեցումը որոշակիորեն ապահովում է քաղաքականության իրականացման հաջողությունը, քանի որ թե՛ այդ քաղաքականությունն իրականացնող միջին օղակներում, թե՛ անմիջական շահառուների շրջանակներում ձևավորվում է վստահություն, թե պետությունն իրենց խնդիրներին լրջորեն է վերաբերվում և շոշափելի փորձ է անում աջակցելու հրատապ կարիքների բավարարմանը:

Որպես հիմնական խոչընդոտող գործոն նշվում է ֆինանսական միջոցների սղությունը. քանի որ խնդիրները բազմազան և բազմաշերտ են, պետական բյուջեի միջոցները երբեմն չեն բավարարում անգամ ամենահրատապ խնդիրներին արձագանքելու համար, ինչպես օրինակ՝ հաշմանդամություն կամ այլ առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց խնամող ընտանիքներին աջակցություն տրամադրելը: Որոշակի ոլորտներում առավել մեծ հաջողություններ արձանագրելուն խանգարում են մշակութային գործոնները, օրինակ՝ գենդերային բռնության դեպքերի կամ դեռահաս հղիների բացահայտման հարցերում:

Ամփոփում

Փորձելով ամփոփել՝ կարելի է առանձնացնել հետևյալ ընդհանուր ուղղությունները, որոնք հնարավորություն կընձեռեն Հայաստանին բարելավել իր նախաձեռնությունները՝ հասնելու ԲՋՄՀ նպատակներին.

- Կանոնակարգել նեղ ոլորտային հիմնախնդիրները՝ ապահովելով բոլոր շահագրգիռ կողմերի նեգրավվածությունը.
- Օրենսդրորեն ամրագրել ոլորտային քաղաքականության մշտադիտարկման և գնահատման պարզ և ֆունկցիոնալ մեխանիզմներ.
- Հանրային մասնակցության աշխուժացման օգնությամբ օրենսդրության կիրարկման խնդիրն ամրագրել պետական և հասարակական կառույցների գործունեության տեսլականում.
- Բարեփոխումներում հաջողության հասնելու համար ապահովել պետական ֆինանսավորում, եթե անգամ այն առանձին դեպքերում զուտ խորհրդանշական դեր ունի: